

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունը (այսուհետև՝ Վարչություն) Երևանի պետական համալսարանի (այսուհետև՝ ԵՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և ԵՊՀ կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:

1.2. Վարչությունը կարող է փոփոխել կարգավիճակը կամ դադարեցնել գործունեությունը ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.4. Վարչությունը ունի ձևաթուղթ:

2. Խնդիրներն ու գործառույթները

2. Վարչության խնդիրներն են՝

2.1 ապահովել, արդիականացնել և կառավարել ներհամալսարանական տեղեկատվական համակարգերի աշխատանքը,

2.2. սպասարկել և արդիականացնել համալսարանի համակարգչային տեխնիկական և սարքավորումները,

2.3 շահագործել և սպասարկել համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառության և կառավարման այլ տեղեկատվական համակարգերի աշխատանքները,

2.4. ապահովել տեխնոլոգիական կարողությամբ ուսումնական ենթակառուցվածքների շահագործումը և աշխատանքների զարգացումը,

2.5. ապահովել ներհամալսարանական տեղեկատվական համակարգերի միասնական շահագործումը և ինտեգրման աշխատանքները, մշակել նոր համակարգեր,

2.6. աջակցել կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացին:

3. Վարչության գործառույթներն են՝

3.1. նախագծել և շահագործել համալսարանի ներքին ցանցը, ներկայացնել առաջարկություններ ցանցի զարգացման ուղղությամբ,

3.2. վերանորոգել համակարգչային տեխնիկական, ներկայացնել առաջարկություններ տեխնիկայի ձեռքբերման երկարաժամկետ ռազմավարության և համապատասխան տեխնիկական առաջադրանքների վերաբերյալ,

3.3. ապահովել ԵՊՀ ստորաբաժանումներում ինտերնետ կապը (համապատասխան սերվերների և հանգույցների կառավարում, չափաբաժինների տրամադրում, մոնիթորինգ և այլն),

3.4. տեղադրել ԵՊՀ ինտերնետային ռեսուրսները (կայք, Վեբ-պորտալ և այլն) և լուծել ընթացիկ սպասարկման աշխատանքների հետ կապված տեխնիկական խնդիրները,

3.5. կառավարել և զարգացնել համալսարանական էլեկտրոնային փոստի համակարգը,

3.6. ապահովել ներհամալսարանական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի, գրադարանի կարիքների համար գործածվող սերվերների ու տեղեկատվական համակարգերի աշխատանքները, իրականացնել համակարգչային տեխնիկայի գույքագրման էլեկտրոնային համակարգի շահագործման, ինչպես նաև գործող համակարգերի ինտեգրման հետ կապված աշխատանքներ,

3.7. սպասարկել կրթական գործընթացում կիրառվող Վեբ-ուսուցման համակարգերը և համապատասխան լսարանների ցանցը,

3.8. տեղեկատվական համակարգերի շահագործման նպատակով կազմակերպել ԵՊՀ աշխատակիցների ուսուցումն ու վերապատրաստումը (էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ և այլն):

4. Կառուցվածքը և կառավարումը

4.1. Վարչության աշխատանքները համակարգում է ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորը:

4.2 Վարչությունը կազմված է տեղեկատվական համակարգերի և ցանցի զարգացման ու համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժիններից: Վարչության հաստիքացուցակը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ռեկտորը՝ վարչությունը համակարգող պրոռեկտորի ներկայացմամբ:

4.3. Վարչությունը գլխավորում է պետը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ռեկտորը:

4.4. Վարչության պետի հետ ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագիր, որը հիմք է դառնում հրամանը ձևակերպելու համար:

4.5. Վարչության պետն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

4.5.1. Վարչության կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավարում և վերահսկում,

4.5.2. ԵՊՀ գիտական խորհրդում և ռեկտորատում ուսանողների տեղեկատվական համակարգերին, համակարգչային ցանցին ու սարքավորումներին վերաբերող հարցերի նախապատրաստում և ներկայացում,

4.5.3. Ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների կողմից համակարգչային սարքավորումների ու տեղեկատվական համակարգերին վերաբերող աշխատանքների կազմակերպում և համակարգում, նշված հարցերին վերաբերող ԵՊՀ հրամանների և նորմատիվ այլ փաստաթղթերի կատարման վերահսկում:

4.6. Վարչության պետը պատասխանատվություն է կրում Վարչության աշխատանքների որակի և նրա առջև դրված խնդիրների ու գործառույթների կատարման համար:

5. Անցումային դրույթներ

5.1. Սույն կանոնադրության 4.2. կետով սահմանված Վարչության կառուցվածքը ուժի մեջ է մտնում ԵՊՀ ռեկտորի հրամանով Վարչության նոր հաստիքացուցակը հաստատելու պահից: